

ՀԻՆ ԱՇԽԱՐՀԸ ՄՈՏ Մ.Թ.Ա. 2000թ. ՃԳՆԱԺԱՄԻՅ ԴԵՊԻ ԿԱՅՈՒՆԱՅՈՒՄ Բորիսյան Ա.

ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ մ.թ.ա. 3-2-րդ հազ. սահմանագլխին գրեթե ողջ հին աշխարհը ներառվել էր ճգնաժամային իրավիճակի մեջ, որի պատճառը կլիմայական պայմանների վատթարացումն էր: Ճգնաժամի հետևանքով մայրցամաքային համակարգերը դարձան ավելի տեղայնացված, ամկում սալքեց թաղաքային կյանքը, ակտիվացավ քաղաքական կենցաղը, ներմուծվեցին նոր մշակութային տարրեր: Մակայն 2-րդ հազ. սկզբին իրավիճակը կայունացավ, կյանքը մտավ իր բնական հունի մեջ: Սա «ժողովուրդների առաջին մեծ գաղթի» շրջանն էր:

Бобохян А. Древний мир ок. 2000г. до н.э. От кризиса к стабилизации. Исследования показывают, что на рубеже 3-2-го тыс. до н.э. почти весь древний мир был вовлечен в кризисную ситуацию, главной причиной которой было ухудшение климатических условий. В результате кризиса культурные провинции стали более локальными, пришла в упадок городская жизнь, взял верх скотоводческо-кочевой образ жизни, были введены новые культурные элементы. Однако в начале 2-го тыс. положение стабилизируется и жизнь входит в нормальное русло. Это была эпоха "первого великого переселения народов".

Bobokhyan A. The Ancient World ca. 2000 B.C.: From Crisis to Stabilization. The investigations show that at the end of the III-beginning of the II Mil. B.C. almost the whole ancient world was in critical situation the main cause of which was the deterioration of climatic conditions. As a result of the crisis the cultural provinces turned into local territories, the civil life collapsed, the nomadic way of existence became more active, and new cultural elements were introduced. However at the beginning of the II Mil. the situation turned to be stable. It was the epoch of "the first great ethnic movements of the peoples" in ancient world.

"Hegels Deutung der Geschichte als "Stufengang der Entwicklung des Prinzips, dessen Gehalt das Bewußtsein der Freiheit ist" werden diesbezügliche Versuche in unserer Zeit wesentlich auf archäologische Zeugnisse gegründet, indem ... die Gliederung in Zeiten als einer Psychoevolution gesehen wird".

«Պատմության հեղեյան սահմանումը, որպես «մի սկզբունքի զարգացման աստիճանական ընթացք, որի բովանդակությունը ազատության գիտակցման մեջ է», մեր ժամանակներում Հայաստանում ի հնագիտական տվյալների փորձի հիման վրա, ըստ որի դարաշրջանների բաժանումը հանդես է գալիս որպես հոգեզարգացում»:

Müller-Karpe, Die Bedeutung der Archäologie für das Geschichtsbewußtsein der Gegenwart, in: "Archeologie und Geschichtsbewußtsein", München, 1982, 19-20.

Էթնո-մշակութային գործընթացները հին աշխարհում մ.թ.ա. 3-2-րդ հազ. սահմանագլխին զարմանալիորեն մոյմաձև էին՝ էթնիկ տեղաշարժեր, մշակութային տարրեր համակարգերի փոփոխություն, ավերածություններ բնակավայրերում ևն: Այս ամենը հիմք հանդիսացան խնդրո առարկա դարաշրջանը անվանելու «մութ» [1]: Սա «ժողովուրդների առաջին մեծ գաղթի» ժամանակաշրջանն էր, որը փոխեց հին աշխարհի էթնիկ քարտեզը [2], մի շրջան, որը թերևս «ամենաբարդն էր» բրոնզի դարում՝ մշակութային փոխազդեցությունները հասկանալու խնառոտ [3]: Երևույթի պատճառահետևանքային կապը դիտարկենք օլյուսմենի հիմնական մշակութային օջախների հիման վրա՝ ելնելով 3 տիպի սկզբնաղբյուրների տվյալներից՝ հնագիտական, գրավոր, երկրաբանական:

1. Ճգնաժամի տարածություն

Արևատական փոփոխությունները տեղի էին ունենում 2 տիպի միջավայրերում: Առավել զարգացած մետաղագործական կենտրոններում (Անատոլիա, Լևանտ, Միջագետք ևն) վերափոխումները տեղի էին ունենում վաղ բրոնզից միջին բրոնզին անցմանը զուգահեռ: Այլ շրջաններում (Արևմտյան Եվրոպա, Կրետե, Սիբիր, Լիբիա, Հիմաստան ևն)՝ նեոլիթ-էնեոլիթյան միջավայրից վաղ բրոնզին անցման մթնոլորտում կամ՝ նեոլիթից-էնեոլիթին (Դանուբի ավազան, Պիրենեյան թերակղզի ևն): Սա չի վերաբերում ամերիկյան մշակույթներին, որոնք մետաղին ծանոթացան մ.թ.ա. 1-ին հազ. վերջից: Այս փոփոխությունները սովորաբար ուղեկցվում էին նոր մշակույթների և էթնիկ տարրերի ի հայտ գալով: Զարգացված գաղացվածության իմաստով ճգնաժամը դիմադրեցին 3 տիպի հասարակությունները՝ 1) պետական հին ավանդույթներ ունեցող (Միջագետք, Եգիպտոս), 2) վաղ պետականության փուլը նոր թևակոխած (Անատոլիա, Լևանտ, Հայկական լեռնաշխարհ, Միջին Ասիա), 3) պետականության սաղմնային փուլում գտնվող կամ մայրամուտային-նեոլիթյան հասարակություններ (Արևմտյան Եվրոպա, ռուսական տափաստաններ):

Յուրաքանչյուր գոտում ճգնաժամը տարածվում էր յուրովի, սակայն մոյմաստիկ իրադարձությունների շրջալով: Այսպես, եթե որոշ շրջաններում այն արտահայտվում էր ավերածություններով (Անատոլիա, Իրան), բնակավայրերի լքումով առանց ավերածությունների (Արևմտյան Եվրոպա, Միջին Ասիա), ապա այլ տարածքներում (Միջագետք, Եգիպտոս)՝ ներքին հասարակական ճգնաժամով, սակավ կամ պարզապես արձատական փոփոխություններով (Հիմաստան, Մեզոստերիկա): Այս գործընթացը զուգակցվում էր նոր էթնոսի ի հայտ գալով և լիակատար գերիշխանությանը (Հնդկաստան, Իրան) կամ հին էթնոսի էական վերափոխմամբ (Հիմաստան): Ընդ որում, ամենուրեք նոր և հին տարրերի միջև նկատվում են թե՛ պայքար, թե՛ համակեցություն:

Ճգնաժամը հիմնականում արտահայտվել է երկու ալիքներով.

- 1) 2300-2200 թթ., որ բերեց Արևելյան Միջերկրականի և Անատոլիայի վաղ բրոնզ II մշակույթների անկմանը, Արքադի և Եգիպտոսի հին թագավորության քայքայմանը ևն:

2) 2100-2000 թթ.: Այս ալիքը բացի վերոհիշյալ շրջաններից, արտահայտվեց հատկապես Հնդկաստանում և Եվրոպայում:

Այժմ դիտարկենք այս գործընթացներն ըստ առանձին գոտիների:

Անատոլիա-Հայկական լեռնաշխարհ-Կովկաս

Ճգնաժամի առաջին ալիքը լավ է արտահայտված Անատոլիայում, ուր բնակավայրերի ավերումն (Տրոյա II, Պոլիխտնի V, Բեյջեստոյան XIII a ևն) ուղեկցվում էր նոր մշակութային տարրերի ներմուծումով (վաղ բրոնզ II 450 բնակավայրերից վաղ բրոնզ III մնացին միայն 125-ը): Բնակավայրերը անկում են ապրում 75%-ով: Հյուսիսարևմտյան Անատոլիա են ներթափում բալկանյան մշակութային տարրեր, Արևմտյան Անատոլիան սերտ կապեր է հաստատում Էգեիդայի հետ, Կենտրոնական Անատոլիայում տարածվում է կապադովկիական գունագարդ խեցեղենի՝ դեպի հարավ ձգտող մշակույթը: Ավերածություններ արձանագրվում են նաև երկրորդ ալիքի ժամանակաշրջանում «Տրոյա V-VI միջև Հայաստանի սահմանները» [4]:

Հայկական լեռնաշխարհում և Հարավային Կովկասում վերջնականորեն անկում է ապրում Կուրարաքսյան մշակույթը, բնակավայրերի մեծագույն մասը լքվում է և վերականգնվում է 2-1-ին հազ. սահմանագլխին: Մի շարք բնակավայրերում նկատվում են ավերածության հետքեր (Ամիրանիս Գորա, Շենգավիթ IV, Կվաջխեղերի-Խիզանաթ Գորա B, Զյուլթեին II, Գեոյ-Թեին, Յանիկ-Թեին, Յիխիսագորա, Կարազ, Նորշունթեին, Թեփեջիթ) [5]: Խզվում է կապը Կուրարաքսյան մշակույթի տարրեր ենթաշրջանների միջև: Նոր մշակութային տարրերը ի հայտ են գալիս դանիարանային համալիրներում (Մարտկոպի, Բեղենի, Թոնդը), քիչ բնակավայրերում է շարունակվում կյանքը միջին բրոնզում (Բերիկլոբերի, Խիզանաթ, Կվաջխեղերի, Զյուլթեին, Սեծանդ, Գառնի, Հառիճ), հիմնվում են հատուկենտ նոր բնակավայրեր (Ուզերիկ, Բաստան, Իմիկուշադը): Նոր փոփոխություններն Անդրկովկասում հավանաբար կապված են առավել հարավային շրջանների հետ [6]:

Արևելյան Կովկասում ևս անկում է ապրում Կուրարաքսյան, իսկ հյուսիսային Կովկասի արևմտյան շրջաններում՝ Մայկոպյան մշակույթը, որոնց հաջորդում է այսպես կոչված «Խյուսիսկովկասյան մշակույթը» իր բազմաթիվ տեղային տարրերակներով՝ կրելով Անդրկովկասի (հարավային շրջաններ) և տափաստանների (հյուսիսային շրջաններ) ազդեցությունը: Դանդաղում են զարգացման գործընթացները: Հենց այս ժամանակահատվածն է համարվում համակովկասյան էթնո-մշակութային միասնության տրոհման սկիզբը [7]:

Մշակութային փոփոխություններ են տեղի ունենում նաև Կովկասի սևծովյան ափերին, որի հետևանքով Կուխիդայում տարածվում է «բնակելի բլուրների» մշակույթը՝ կենտրոնական շրջաններում փոխարինելով Կուրարաքսյան երանգներով տեղական մշակույթին և միաձուլվելով դոմենյան մշակույթի կրողներին: 3-2-րդ հազ. սահմանագլխին սևծովյան տրանսգրեսիայի հետևանքով Կուխիդայի և գրեթե ողջ Մև ծովի ավազանի շրջանում բազմաթիվ տարածքներ դարձան ամայի՝ լքվեցին բնակավայրերը (օր. Իսպաանի), որոնք վերականգնվեցին միայն 500-600 տարի հետո [8]:

Իրան-Միջին Ասիա-Հնդկաստան

Իրանի հյուսիսարևելյան շրջաններում լքվում են Կուրարաքսյան բնակավայրերը: Բնակավայրերի նվազում մոտ 2000 թ. նկատվում է ողջ Իրանական բարձրավանդակի տարածքում: Լքվում և ավերվում են Թեփե-Մալանը, Շահր-ի-սոխտան, Թեփե-Յահյան, Թեփե-Հիսարը, Բամբուրը, Միսկը, Շահ-թեփեն, Թյուրենգ-թեփեն: Ճգնաժամային իրավիճակում է հայտնվում Էլամը (Հարավային Իրանում) [9]:

Նմանատիպ գործընթացներ են նկատվում Միջին Ասիայում, ուր բնակավայրերի լքումն (Նամագզա, Ալթին-թեփե) ուղեկցվում էր քաղաքային կյանքի անկմամբ: Մերձարալյան գոտում 3-2-րդ հազ. սահմանագլխին անկում է ապրում մետաղյան կելտեմիդարյան և տարածվում սուլյարգանյան մշակույթը, որի կրողները եկել էին հարավային շրջաններից. միևնույն ժամանակ Ամու Դարյայի ստորին հոսանքի շրջանում հայտնվում են տափաստանաբնակներին ազգակից թագաբազարյան մշակույթի կրողները: Դազախտոսանում, Միրիքում և Ալթա-յում ի հայտ է գալիս Աֆանասյան մշակույթը (նույնը նկատվում է Արևելյան Միրիքում, ուր մետաղից անցումը վաղ բրոնզին արձանագրվում է հենց մեզ հետաքրքրող ժամանակաշրջանում, հմնա. Գլազովյան մշակույթը) [10]:

3-րդ հազ. վերջում անկում ապրեցին և լքվեցին Ինդոսի դաշտավայրի քաղաքները (Հարապա, Մոհենջո Դարո, Կոթ-Դիդջի, Կալիբանգան, Լոթալ, Ռան Գեոմոդաի, Դարբար-Կոթ, Շահի-Թամի): Քաղաքային կյանքի անկումը ուղեկցվում էր էթնիկ տեղաշարժերով թե՛ բուն Հնդկաստանում, թե՛ նրանից դուրս (Միջին Ասիայից) [11]:

Միջագետք և հարակից շրջաններ

Երկրագործական բնակավայրերի լքում և քաղաքների ամայացում է նկատվում հատկապես Հյուսիսային Միջագետքում (Թել-Լեիլան, Թել-Թայա, Չագար-Բագար, Թել-ալ-Հավա): Ավերածությունները կատարվում էին կուտիների, լուրբեացիների, արևմտասեմական ցեղերի խիստ աշխույժ տեղաշարժերի մթնոլորտում: Ճգնաժամային երկու ալիքների հետևանքով անկում ապրեցին Աքքադի և Ուրի III դինաստիայի պետությունները [12]:

Ճգնաժամային իրավիճակում են հայտնվում նաև Միջագետքի հետ ակտիվ կապեր ունեցող Դիլմունի (Բաբելոն կղզին՝ Պարսից ծոցում) և Մագանի (Արաբական թերակղզի) տարածքները, ուր բնակավայրերը վերանում են մինչև 2-րդ հազ. 2-րդ քառորդը [13]:

Լևանտ և Հյուսիսային Աֆրիկա

Քաղաքային կյանքի անկումը Լևանտում ուղեկցվում էր քաղաքային աճով: Ի հայտ են գալիս նոր մշակութային տարրեր հանձնին կուրգանների և կատակոմբների (Նեգև, Բար Էդի-Դիբա, Մեզիդդա, Երիքով), որոնք սովորաբար կապվում են հնդեվրոպացիների հետ: Հյուսիսային Պաղեստինում և Միրիայում վերանում են Քիր-թեթ-կերակյան մշակույթի հետքերը: Ավերվում են մի շարք բնակավայրեր (օր. Բիրբուր): Այս ամբողջ ժամանակաշրջանը լևանտյան հնագիտության մեջ սովորաբար անվանում են «միջանկյալ բրոնզի դար» [14]:

Եզիպտոսում անկում է ապրում հին թագավորությունը, երկիրը արծիվում է բազմաթիվ նամերի, սկսվում է առաջին անցումային շրջանը (XXIII-XXI-րդ դդ.): Բնակավայրերի ավերածությունները, սաստիկ սովը, Նեղոսի հեղեղները և ցամաքելը, ասիական և լիբիական ցեղերի էթնիկ տեղաշարժերն արտացոլում են ճգնաժամային իրավիճակը Եզիպտոսում: Հարևան Լիբիայում լքվում են նեոլիթյան բնակավայրերը, և բնակչության զգալի հատվածը գաղթում է Նեղոսի հովիտ [15]:

Եվրոպա

Փոփոխություններ են նկատվում ողջ Եվրոպայում: Բալկաններում և Պոնտոսի ափերին տեղի ունեցած փոփոխությունները 3-2-րդ հազ. սահմանագլխին առնչվում են 2 մեծ միգրացիաների՝ յամնիկների և անատոլիա-կովկասյան ցեղերի հետ: Նախ յամնիկները թերևս զրավում են տարածքը, ապա՝ անատոլիա-կովկասյան ցեղերը դուրս են մղում վերջիններին: Այս միգրացիայի հետ է կապվում Տրոյա V ավերումը [16]: Անատոլիական տիպի մշակույթի կրողները ներխուժում են նաև Մակեդոնիա: Քիչ ավելի ուշ այստեղ են հայտնվում մինիական ցեղերը՝ փոխելով տեղի նեոլիթյան մշակույթի պատկերը [17]:

2300-2000 թթ. բազմաթիվ բնակավայրեր են ավերվում Հունաստանում (Օրխոմեն, Լերնա, Տիրինթոս, Ասինե, Ջիգորիես, Կորնթոս, Կորալոս, Էվտրեսիա): Վաղիելլադյան մշակույթը անկում է ապրում և նոր մշակույթը՝ Միջինիելլադյանը, իր մինիական խեցեղենով, արդեն այլ բան է, քան մախորդը: Մոտ 2000 թ. Կրետեում ի հայտ է գալիս պալատական քաղաքակրթությունը, որը սերտ կապեր է ունեցել Անատոլիա-Լևանտ գոտու հետ [18]:

Ուրալից մինչ Դնեստր ընկած շրջանում 3-րդ հազ. զարգանում էր յամնայա մշակույթը, որը 3-2-րդ հազ. սահմանագլխին փոխարինվում է կատակոմբային (Ստորին Դնեստրի և Դոնի շրջանում), միջինդենայրովյան և պոլտավկինյան (Պոլովոնիում) մշակույթներով [19]: Վերին Դնեստրի շրջանում (Բելոռոսիա) 3-2-րդ հազ. սահմանագծին անկում է ապրում տեղական նեոլիթյան մշակույթը և առաջանում է վերինդենայրովյան մշակույթը՝ ազգակից միջինդենայրովյանին [20]:

Կարպատներից մինչև միջին Դնեստր տարածվող Տրիպոլյան մշակույթը ևս անկում է ապրում՝ յամնիկների զանգվածային առաջխաղացման հետևանքով [21]:

Արևելյան Եվրոպայի ծայրամասային անտառային շրջաններում 3-2-րդ հազ. սահմանագլխին նոր էթնիկ տեղաշարժի հետևանքով ձևավորվում են Ֆատյանովյան, իսկ Միջին Պոլովոնիի շրջանում՝ Բալանովյան մշակույթները, որոնք պատկանում են սակրակիր ցեղերի մշակութային գոտուն: Այս ցեղերի մի հատվածը հասնում է Մերձբալթիկա՝ ենթարկելով տեղական նեոլիթյան մշակույթի կրողներին [22]:

3-2-րդ հազ. սահմանագծին Իսպանիայից Լեհաստան, Միջիլիայից Շոտլանդիա ընկած տարածքներում արագորեն տարածվում էր զանգակաձև գավաթների մշակույթը՝ նստելով տեղական նեոլիթյան ցեղերի ենթաշերտի վրա և տարածելով արտադրողական տնտեսությունը և մետաղագործությունը [23]:

Դանուբի ավազանում հայտնվում են նոր ցեղեր, որոնք նպաստում են տեղական նեոլիթյան մշակույթի միաձուլության քայքայմանը և մի շարք տեղական մշակույթների առաջացմանը:

Մոտ 2000թ. լքվում են նաև Միջիլիայի նեոլիթյան բնակավայրերը, որոնց փոխարեն ի հայտ են գալիս քաղաքատիպ գյուղեր՝ արևելամիջերկրական մշակույթներին բնորոշ առանձնահատկություններով: Իտալիա են ներխուժում կենտրոնաեվրոպական տիպի մշակութային տարրեր՝ նպաստելով բրոնզի դարի սկզբնավորմանը: Էթնիկ տեղաշարժի (կրետացիներ) արդյունքում նոր մշակույթներ են ի հայտ գալիս Մալթայում և Մարդինիայում: 3-րդ հազ. վերջում Պիրենյան թերակղզին է ներխուժում արևելամիջերկրական երանգներով Լոս-Միլյարեսի մետաղին ծանոթ մշակույթը:

Էթնիկ տեղաշարժի հետևանքով 3-2-րդ հազ. սահմանագլխին անկում է ապրում Ալպերի վաղնեոլիթյան մշակույթը, որին փոխարինելու է գալիս միջիննեոլիթյան (զորգենյան) մշակույթը: Նախորդի անկման պատճառը կլիմայական պայմանների վատթարացումն էր (Նեվշատելյան լճի ջրհեղեղը ջրասույգ է անում տարածքի հիմնական բնակավայրերը):

Բրիտանական կղզիներում տեղական նեոլիթյան միջավայրում տարածվում են մեգալիթյան դամբարանների կրողները, որ այստեղ էին հայտնվել Արևմտաբրից: Միևնույն ժամանակ բրիտանական սարահարթը ողողվել էր զանգակաձև գավաթների մշակույթի ցեղերով [24]:

Հիմնատան Հնդկաստան

4-3-րդ հազ. Հիմաստանում զարգանում էր նեոլիթյան յամնայա մշակույթը, որն անկում է ապրում 3-2-րդ հազ. սահմանագլխին և Խուանիսի ավազանում փոխարինվում է լունշանյան մշակույթով: Վերջինս ռազմականացված է նեոլիթյան հասարակություն էր և դարակազմիկ նշանակություն է ունեցել Հիմաստանում՝ դասակարգային հասարակության ստեղծման համար: Իսկ Հարավային Հնդկաստանում 3-րդ հազ. զարգանում էր բալականին առաջադեմ մետաղագործական մի մշակույթ, որը 2-րդ հազ. սկզբին աստիճանաբար անկում ապրեց և վերածվեց գյուղական միջավայրի [25]:


Ամերիկա

3-2-րդ հազ. սահմանագլխին Լական փոփոխություններ են տեղի ունենում նաև Հյուսիսային Ամերիկայում (Վուդլենդ), Մեզոամերիկայում, Պանամայում, Կոլումբիայում, Կենտրոնական Ամերիկայում: Հայտնաբերվում է խեցեղեկագործությունը, բնակչությունը դառնում է մստակյաց-երկրագործ: Դիֆուզիոնիստներն այս փոփոխությունները կապում են ասիական ազդեցությունների և էթնիկ տեղաշարժերի հետ [26]:

2. Ճգնաժամի պատճառները

Բանավեճերն այս խնդրի շուրջ մասնագետներին բաժանել են մի քանի խմբերի [27], որոնք առաջնային են համարում.

ա) ներքին դեմոգրաֆիական գործոնը: Գտնելով, որ հասարակության մեջ տեղի ունեցող փոփոխությունները ներսից են գալիս և կապ չունեն ժողովուրդների տեղաշարժերի հետ [28]: Այս տեսակետի օգտին կարող են



Քարտեզ. Կուրգանային մշակութիւնի տարածումը մ.թ.ա. III հազ. վերջին (Gimbutas 1965, map 1 հիման վրա).

Թվերով ցույց են տրված տեղական մշակույթները, նախքան կուրգանային տարրերի ի հայտ գալը: 1. Տրոյա I, II; 2. Կիլիկյան վաղ քրոն; 3. Կենտրոնամատուրիական; 4. Կուրաքարային մշակույթ; 5. Դենար-Դոնեց; 6. Կուկուտնի-Տրիպոլի; 7. Գոմելնիցա; 8. Մակեդոնյան վաղ քրոն; 9. Հարավ-հունական; 10. Վաղ Միսոյան; 11. Մալկոտա; 12. Ուշ Վինյա; 13. Բոտոմիր; 14. Դանուբյան III; 15. Տիսցա փուլը և Բորոգլեռնոգոտուր; 16. Չանգակաձև անոթների տարածման հյուսիսային գոտի; 17. Չանգակաձև անոթների տարածման հարավարևմտյան գոտի; 18. Չանգակաձև անոթների տարածման հարավարևելյան գոտի; 19. Հորգեն; 20. Վիդնիլ Վիդնիլ; 21. Մանրատաճ զարդերով խեցեղենի գոտի; 22. Փոսիկսկոբ զարդերով խեցեղենի գոտի:

խոսել տնտեսական վերելքի ակնառու փաստերը բազմաթիվ տարածքներում 3-2-րդ հազ. սահմանագրծին և նկատվող ժառանգականությունը նոր և հին մշակույթների միջև գրեթե ամենուրեք: Մակայն այդ դեպքում ինչ-պես բացատրել համատարած ավերածությունների փաստը բնակավայրերում:

բ) Արտաքին գործոնը: 3-2-րդ հազ. սահմանը ակտիվ էրնիկ տեղաշարժերի շրջան էր [29]: Դրանցից առավել ծավալունը հնդեվրոպացիների տեղաշարժերն էին: Ըստ Մ. Գիմբուտայի այդ ալիքները գաղիս էին Հյուսիսային Պոնտական և Կովկասյան շրջաններից («Կուրգան IV» մշակույթը, որի կրողները յամնիկներն ու կատակոնիկներն էին): Նրանց է վերագրվում Լևանտի, Հարավային Անատոլիայի, Հունաստանի բնակավայրերի ավերումը (հմտ. քարտեզը): Մա հնդեվրոպացիների առավել հուժկու ալիքն էր, որ պատմական առարկեզ բերեց հույներին և խեթերին: Այս շրջանում էր, որ հնդարիացիները Իրանի և Միջին Ասիայի վրայով հասան Հնդկաստան, իսկ բալթերը, սլավոնները և գերմանացիները ընթացան դեպի Արևմտյան Եվրոպա: Նրանք ակտիվացան նաև Հայկական լեռնաշխարհում և Անդրկովկաս հասան, որպես կուրգանային մշակույթի կրողներ [30]:

3-2-րդ հազ. սահմանագլխին տեղի ունեցավ խորիմասկան ցեղերի տարածումը Առաջավոր Ասիայում՝ Հայկական լեռնաշխարհից: Ալտիվացան կովկասյան ցեղերը [31]:

Բավականին կենսունակ էին նաև սեմական տարրերը: Հենց 3-2-րդ հազ. սահմանին կարող էր վերաբերել երեաների ելքը Միջագետքից: Հայկական լեռնաշխարհի հարավային շրջաններից մինչև Եգիպտոս ընկած տարածքներում խիստ ակտիվ էին արևմտասեմական էրնիկ խմբերը [32]:

Տեղաշարժերի այս մթնոլորտում տարածվում և փոխադրում էին մարդաբանական տիպերը (հմտ. օր.՝ արմենոիդների ի հայտ գալը Արևմտյան Եվրոպայում կամ Հյուս. Հնդկաստանում) [33], գաղափարները, մշակույթները: Մակայն մարդիկ հենց այնպես չեն լքում իրենց՝ բնակավայրերը: Դրա համար անհրաժեշտ են լուրջ պատճառներ:

գ) Բնական պայմանների գործոնը: Դեռ Կ. Շեֆերը 3-րդ հազ. վերջերին քաղաքային կյանքի անկումը բացատրում էր լայնատարած երկրաշարժերի ալիքով [34]: Մակայն, այս համատեքստում, առավել հիմնավոր

կարելի է համարել կլիմայական պայմանների փոփոխման տեսակետը: Հնակլիմայաբանական ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ 3-րդ հազ. վերջում կրճատվում են տեղումները, պակասում են անտառները, լայնատարած շրջաններն ընկնում են արդիիզագիսի գոտու մեջ: Այս կլիմայական աղետը երկրաբանորեն նկատվում է Սև, Միջերկրական, Կասպից ծովերի, Սևանա և Վանա լճերի նստվածքներում, ողջ Ասիայում, Եվրոպայում, Աֆրիկայում, Միջերկրում և նույնիսկ Ամերիկայում և Ավստրալիայում [35]: Հավանաբար, միայն կլիմայական պայմանների փոփոխությունը կարող էր հանգեցնել այդպիսի լայն էթնիկ տեղաշարժերի, որոնք, ինչպես պարզվում է, ունեցել են ընդհանուր պատճառ [36]:

3. Ճգնաժամի հետևանքները

Ո՞րն էր «մշակութային ապակայունացման» [37] այս ժամանակաշրջանի հիմնական հետևանքը: 5-4-րդ հազ. սկսած ասիական և եվրոպական մի շարք տարածքների միջև ձևավորվել էր մշակութային սերտ փոխազդեցության միջավայր («արտվիճիս»), որ տարբեր ժամանակներում տարբեր ձևերով է կոչվել (օր. «Vorderasiatische Kulturtrift» ըստ Ֆ. Շախերմայերի, կամ «Циркумпономийская провинция» ըստ Ե. Չերնիխի) [38]: Ահա 3-րդ հազ. վերջին տեղի ունեցած ճգնաժամը բերեց այս գոտու քայքայմանը և ավելի փոքր տարածքներ ընդգրկող մշակութային օջախների ստեղծմանը («Հեռա-կասպյան», «Ամատոլիա-թալկանյան», «Առաջավոր Ասիա-Փոքր Ասիա-Անդրկովկասյան») [39]: Այս ամենը հանգեցրեց մշակույթների մեկուսացման խորացմանը (3-րդ հազ. միասնական մշակույթները բաժանվեցին տարբեր ենթագոտիների՝ հնմտ. Կորաթաքսյան շրջան, տափաստաններ, Միջին Ասիա, Իրան, Հնդկաստան, Դանուբ, Եգիպտոս, Լևանտ ևն) [40]:

Ճգնաժամի հետևանքով զգալիորեն անկում ապրեց քաղաքային կյանքը, ակտիվացավ քոչվոր-անասնապահական կենցաղը (Եվրոպա, Ռուսաստանի անտառային գոտի, Կովկաս, Լևանտ, Ամատոլիա ևն): Տեղի ունեցավ բնակչության տեղափոխում լեռնային գոտիներ (Պաղեստին, Անդրկովկաս) [41]: Կորույս պակասեց բնակավայրերի քանակը (Կովկաս, տափաստաններ, Լևանտ, Աֆանասկյան և Ֆատյանոլյան մշակույթներ, Կիլիկյաններ ևն) [42]: Հնագիտական հուշարձանների մեջ հաճախ դարձրաբանները քանակով սկսում են գերակշռել բնակավայրերին (Անդրկովկաս, Աֆանասկյան մշակույթ ևն):

Վերականգնվեցին կամ ներմուծվեցին նոր մշակութային տարրեր: Այսպես, մի շարք շրջաններում լայնորեն տարածվեց անագային բրոնզը (Հունաստան, Հայկական լեռնաշխարհ, Ամատոլիա), խեցեգործության մեջ սկսեց լայնորեն կիրառվել բրոնզի անիվը (Բալկաններ, Ամատոլիա), բազմաթիվ երկրամասերում վերականգնվեց կամ ներմուծվեց գունազարդ խեցեղենի ավանդույթը (Հայկական լեռնաշխարհ, Իրան, Միջին Ասիա, Հնդկաստան, Լևանտ, Ամատոլիա, Հունաստան, Կիլիկյաններ, Կիպրոս, Կրետե) [43], միաժամանակ տարածվեց ձիաբուծությունը (Մակեդոնիա, Բալեն, Ֆատյանոլյան, Միջիլիական մշակույթներ, Ալպեր, Պիրենեյներ, Ամատոլիա, Հայկական լեռնաշխարհ, Չինաստան, Աֆանասկյան մշակույթ ևն) [44], քառանկյուն կացարանների կառուցման փորձը (Եվրոպա, Ամատոլիա, Հայկական լեռնաշխարհ):

Ճգնաժամի հետևանքներից մեկն էլ մարդկանց գիտակցության մեջ տեղի ունեցած փոփոխություններն էին, որ արտահայտվեցին կրոնում և աշխարհայացքում [45]:

4. Ճգնաժամից - կայունացում

Ճգնաժամն ավելի հեշտ ընդունեցին զարգացած, քան ծայրագավառային շրջանները [46]: Սակայն գրեթե բոլոր տարածքներում էլ 2-րդ հազ. սկզբին իջավ անդորը: Ու թեև որոշ տարածքներում շարունակվում էր գոյատևել քոչվորական կենսաձևը (Եվրոպայի անտառային գոտի, Պիսիդիա, Լիկիա, Հայկական լեռնաշխարհ ևն) և տեղի էին ունենում նոր էթնիկ տեղաշարժեր (հիքսոսներ, կասսիտներ, սրուրինկներ ևն), սակայն արդեն կարելի է խոսել «ուշիմպերային վերածննդի» [47] մասին: Ծիշտ է, որոշ շրջաններ ինչ-որ տեղ բռնեցին զարգացման հետընթաց ուղին՝ չդիմապակով ճգնաժամի հարվածներին (Հյուսիսային Կովկաս, Հարավային Եվրոպա, Հյուսիսային մերձսևծովյան շրջաններ, Բալկաններ, Բրիտանիա, Ալպեր), սակայն այլ տարածքներ, որ ավելի մոտ էին ակտիվ ճանապարհներին և գերծ էին մնացել խիստ հետամնաց ցեղերի ներթափանցումից (Ամատոլիա, Էգեիդա, Առաջավոր Ասիա), վերելք ապրեցին, երբորդ տիպի շրջաններում, թեև չդադարեց առաջընթացը, բայց տեղի ունեցավ զարգացման կենտրոնների տեղափոխություն (Միջին Ասիա, Միջագետք):

Նմանապես անդորր իջավ Միջագետքում (ուր քոչվոր սենիտները դարձան նստակյաց), Կարպատներում, Լևանտում ևն [48]: Բազմաթիվ նոր պետական կազմավորումներ ստեղծվեցին Էգեիդայից մինչև Հնդկական օվկիանոս: Այս ժամանակաշրջանում արդեն առավել կարևոր դեր էին խաղում ներքին գործոնը, և քաղաքական հարաբերությունները ձևավորված պետությունների միջև:

Այսպիսով, մենք փորձեցինք դիտարկել հին աշխարհի պատմության մի դրվագը: Այստեղ հատկապես հետաքրքիր է նույն օրինաչափության զարգացման հանգամանքը իրարից շատ հեռու գտնվող տարածքներում: Ծիշտ է ճգնաժամային իրավիճակը միևնույն ժամանակ չի տարածվել նշված շրջաններում (հաճախ նկատվում է առանամայակների և հարյուրամյակների տարբերություն. այս իմաստով կարելի է հաշվարկել աղետների տարածման արագությունը), սակայն չի բացառվում ընդհանուր պատճառի օրինաչափության առկայությունը: Պատմաառասպելաբանական ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ նման կատակլիզմներ մարդկանց պատկերացմամբ պատմության մեջ տեղի են ունենում մոտ 500-1000 տարին մեկ: Ըստ հնագիտական ավայլների ապակայունացում հին հասարակություններում նկատվում է 4-րդ, 3-րդ և 2-րդ հազ. վերջում [49]: Այստեղ ակամայից հիշում ենք հեռերի այն միտքը, որ ավետները, կարծես, հանդիսանում են պատմության շարժիչ ուժը [50]: Ահա, աղետներով ուղեկցվող ճգնաժամները մի տեսակ անցումային իրավիճակներ են մարդկային աշխարհայացքի և ընդհանրապես պատմության (resp. ազատության ընկալման՝ ըստ հեգելյան սահմանման) զար-

* Որոշ ժողովուրդների մոտ քաղավորը հանդիսանում է բնական աղետների կարգավորիչ [51]: Այս իմաստով քաղավորական իշխանության ծնունդը 3-2-րդ հազ. սահմանափակի կարելի է կապել մաս էթնիկ խմբերի ձգտման հետ, ստեղծելու հարիզմատիկական կերպար, որն ունակ է երկիրը դուրս բերել աղետներից:

զացման ընթացքում: Եվ այս իմաստով բացատրություն չէր մեզ հետաքրքրող ժամանակաշրջանը, որը մի յուրահատուկ սահմանագիծ հանդիսացավ հնի ու նորի միջև:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

- [1] Bell B. The dark ages in ancient history, AJA, v. 75, 1, 1971, 1.
- [2] История Европы, т. 1, Древняя Европа. М., 1988, 87.
- [3] Ламберг-Карловски К.К. Модели взаимодействия в III тыс. до н.э., ВДИ, 1, 1990, 7-8.
- [4] Mellaart J. Anatolia c. 2300-4000 B.C., C.A.H., 1, XVIII, 1965, 46; Schachermeyer F. Zur Rolle der Luwier in der Frühgeschichte, Anatolia Arastirmalari, B. II, 1-2, 1963, 406.
- [5] Кушнарева К.Х., Чубинишвили Т.В. Древние культуры Южного Кавказа. Л., 1970, 100, 110, 177.
- [6] Edens C. Transcaucasia at the End of the Early Bronze Age, BASOR, 299/300, 1995, 53; Махарадзе Э. Поселение Цихнагора. Тб., 1994, 81-2.
- [7] Марковин В.И. Культура племен северного Кавказа в эпоху бронзы, МИА, 93, М., 1960, 50; Гаджиев М.Г. Северо-восточный Кавказ в эпоху средней бронзы. — КСПКЕ, с. 69-73.
- [8] Хачушташвили Д.А. Заметки по истории металлопроизводства в древней Колхиде. — КСПКЕ, 56.
- [9] Kohl P.L. The use and abuse of world system theory: in "Advances in archaeological method and theory", 11, 1987, 23-24.
- [10] Kohl P.L. Central Asia: in "Chronologies in old world archaeology", Chicago, 1992, 191; Киселев С.В. Бронзовый век СССР. //Новое в Советской Археологии. М., 1965, 56; Шишкин И.Б. У стен великой Намазги. М., 1981, 189-90.
- [11] Kumar G.D. The ethnic components of the builders of the Indus Valley civilization, JIES, v.1, N 1, 1973, 89-102.; Археология старого и нового света. М., 1966, 179.
- [12] Weiss H. Desert storm; Sciences, May/June 1966, 31-5.
- [13] Lamberg-Karlovsky C.C. The Longue dure of the ancient Near East: "De l'hunds aux Balkans", Paris 1985, 62.
- [14] Finkelstein I. Further observations on the socio-demographic structure of the Intermediate Bronze Age, Levant, XXII, 1989, 129; Bell B., ibid.1.
- [15] Bell B., ibid., 5, 7-24.
- [16] Титов В. Ред. на кн.: Ковача Т. "Бронзовый век Венгрии"; Археология старого и нового света. М., 1982, 213.
- [17] Чайлд Г. У истоков Европейской цивилизации. М., 1952, 124-126.
- [18] Crossland R.A. Linguistics and archaeology in Aegean prehistory: "Bronze Age Migrations in the Aegean", L. 1973, 19; Чайлд Г., т.ж., 108.
- [19] Черных Е.Н. Циркумпонтийская провинция: "Древний Восток". М., 1988, 45.
- [20] Киселев С.В., т. ж. 42.
- [21] Збеневич В.Г. Место Трипольской культуры в энеолите причерноморья, КСПК, В 116.
- [22] Киселев С., т. ж., 45, 47.
- [23] Renfrew C. Archaeology and Language, Cambridge-New-York, 1988, 24.
- [24] Чайлд Г., т. ж., 161-7, 313-29, 345, 358, 389-90, 426, 444.
- [25] Дикши С.К. Введение в археологию. М., 1960, 407; Чеснов Л.В. Историческая этнография стран Индокитая. М., 1976, 6.
- [26] Археология старого и нового света. М., 1966, 258, 260, 276-87.
- [27] Weiss H., ibid., 34-6.
- [28] Эпоха бронзы Кавказа и Средней Азии. М., 1994, 134.
- [29] Черных Е.Н. Протондоевропейцы в системе Циркумпонтийской провинции; Античная Балканистика. М., 1987, 140.
- [30] Gimbutas M. The destruction of Aegean and East-Mediterranean ar. 2300 B.C.; "Bronze Age Migrations in the Aegean". L., 1973, 129-39.
- [31] Дьяконов И.М. Предистория армянского народа. Е., 1968, 5; Lloyd S. Early Anatolia. L., 1956, 70.
- [32] Dunard M. Bubles et ses temples apres la penetration amorite; "Mesopotamien und seine Nachbarn", B. 1, t. 1. Berlin, 1982, 196.
- [33] Հայրապետյան Մ. Միջին և Երկրորդ հազարամյակների Միջին Ասիայի մշակույթը, 3, 1993, 13:
- [34] Weiss H., ibid, 34.
- [35] Weiss H., ibid, 36; Bell B., ibid., 3; Nitzel W. The climate changes of Mesopotamia and bordering areas, Sumer, XXXII, 1976, 21; История Европы, 87: Эпоха бронзы лесной полосы СССР. М., 1987, 10, 327, 343.
- [36] Bell B., ibid., 2.
- [37] Черных Е.Н. Циркумпонтийская провинция, 53.
- [38] Schachermeyer F., ibid., 404-5; Черных Е.Н., т.ж., 37-58.
- [39] Черных Е.Н., Авилова Л.И. Малая Азия в системе металлургических провинций; "Естественнонаучные методы в археологии". М., 1989, 76-77; Кушнарева К.Х., Чубинишвили Т.Н., т. ж., 184.
- [40] Lamberg-Karlovsky C.C. The longue dure, 68; Между Азией и Европой. СПб., 1996, 39.
- [41] Weiss H., ibid., 35.
- [42] Киселев С.В., т.ж., 47; Чайлд Г., т.ж. 83.
- [43] Korfmann M. Tilkitere. Tubingen, 1982, 183-4; Kumar G.D., ibid., 74; Тутанхамон и его время. М., 1976, 187 с.
- [44] Чайлд Г., т.ж., 125, 164, 223, 313, 385, 368.
- [45] Чайлд Г., т.ж. 339; Bell B., ibid., 23-4.
- [46] Шишкин И.Б., 193.
- [47] Mellaart J. Anatolia, c. 2300-1750, B.C., C.A.H., 1, VII, 1971, 39.
- [48] Чайлд Г., т.ж., 389, Weiss H., ibid., 36; Массон В.М. Первые цивилизации. М., 1989, 115, 214.
- [49] Лопов В. Некоторые проблемы этнических связей между Балканским полуостровом и Малой Азией. — Studia Thracica, 1, 1975, 7-19.
- [50] Барс М.А. Эпохи и идеи. Становление историзма. М., 1987, 51; Bell B., ibid., 22.
- [51] Bell B., ibid., 22.

Հանադրամագրություններ

ВДИ - Вестник Древней истории

КСПКЕ - Кавказ в Системе Палеометаллических Культур Евразии. Тб., 1987

МИА - Материалы и исследования по археологии СССР

AJA - American Journal of Archaeology

BASOR - Bulletin of the American Schools of Oriental Research

CAH - Cambridge Ancient History

JIES - Journal of Indo-European Studies